

**Ենթահավելված 6**

Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

**Հավելված 6**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)**

**«\_30\_» սեպտեմբերի\_2010թ.**

**«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ**

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

<b>ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>Ծանոթագրություններ</b>	<b>Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան</b>	<b>Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան</b>	<b>Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան</b>	<b>Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան</b>
Տոկոսային և մնանատիպ եկամուտներ	3	645.912	1.739.913	398.876	1.052.519
Տոկոսային և մնանատիպ ծախսեր	3	(218.524)	(598.188)	(151.399)	(300.380)
<b>Զուտ տոկոսային և մնանատիպ եկամուտ</b>		<b>427.388</b>	<b>1.141.725</b>	<b>247.477</b>	<b>752.139</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	51.804	127.278	33.868	106.465
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(35.813)	(71.536)	(24.263)	(71.985)
<b>Մտացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>		<b>15.991</b>	<b>55.742</b>	<b>9.605</b>	<b>34.480</b>
Եկամուտ շահաբաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	74.309	194.841	138.464	395.881
Այլ գործառնական եկամուտներ	6	23.757	74.200	29.740	90.748
<b>Գործառնական եկամուտներ</b>		<b>541.445</b>	<b>1.466.508</b>	<b>425.286</b>	<b>1.273.248</b>
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	32.779	(82.085)	(6.024)	(332)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(156.768)	(453.173)	(134.703)	(404.757)
Այլ գործառնական ծախսեր	9	(46.768)	(130.450)	(37.934)	(125.273)
<b>Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը</b>		<b>370.688</b>	<b>800.800</b>	<b>246.625</b>	<b>742.886</b>
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(77.460)	(161.623)	(38.139)	(131.894)
<b>Շահույթը (վնասը) հարկումից հետո</b>		<b>293.228</b>	<b>639.177</b>	<b>208.486</b>	<b>610.992</b>
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		(682)	1.749	640	2.042
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		0	(350)	0	0
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո</b>		<b>(682)</b>	<b>1.399</b>	<b>640</b>	<b>2.042</b>
<b>Համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>292.546</b>	<b>640.576</b>	<b>209.126</b>	<b>613.034</b>

Բանկի վարչության նախագահ

Էմիլ Սողոմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ալվարո Սլրտումյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը \_\_13.10.10թ.

**Ենթահավելված 7**

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 127-Ն որոշմամբ

**Հավելված 7**

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
սկանի հուլիսի 10-ի  
թիվ 205 Ն որոշման

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ձև թիվ 7)**

**Ֆինանսական վիճակի մասին**

**«\_30\_»\_սեպտեմբերի\_\_2010թ/**

**«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ**

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

*(հազար դրամ)*

	<b>ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>Ծանոթագրություններ</b>	<b>Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	<b>Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված/չստուգված)</b>
<b>1</b>	<b>Ակտիվներ</b>			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	4.638.330	5.758.227
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ		2.742	2.742
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	2.317.208	2.991.286
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ	16	15.703.634	10.413.767
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	1.162.494	309.923
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	1.655.829	1.631.869

1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	21, 3		
1.12	Այլ ակտիվներ	22	210.951	410.379
	<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>25.691.188</b>	<b>21.518.193</b>
<b>2</b>	<b>Պարտավորություններ</b>			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	1.346.552	681.852
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	5.765.422	6.167.410
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	8.172.842	4.735.732
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	26		
2.5	Վճարվելիք գումարներ	27	1.200	153.808
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	28,3	1.241	500
2.7	Պահուստներ	34		
2.8	Այլ պարտավորություններ	29	149.822	95.358
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>		<b>15.437.079</b>	<b>11.834.660</b>
<b>3</b>	<b>Կապիտալ</b>			
3.1	Կանոնադրական կապիտալ	30	7.200.000	7.200.000
3.2	Էմիսիոն եկամուտ	31		
3.3	Պահուստներ՝		51.214	49.815
3.3.1	Գլխավոր պահուստ		52.075	52.075
3.3.2	Վերագնահատման պահուստներ	32	(861)	(2.260)
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)	33	3.002.895	2.433.718
3.5	Կապիտալի այլ տարրեր	32		
	<b>Ընդամենը՝ կապիտալ</b>		<b>10.254.109</b>	<b>9.683.533</b>
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ</b>		<b>25.691.188</b>	<b>21.518.193</b>

Բանկի վարչության նախագահ  
(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը \_\_13.10.10թ.\_\_\_\_\_

Էմիլ Սողոմոնյան

Ալվարո Սկրտումյան





11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														
<b>12. Այլ համապարփակ եկամուտ</b>						1.399			639.177		640.576		640.576	
<b>13. Շահութաբաժիններ</b>										(70.000)	(70.000)		(70.000)	
<b>14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝</b>														
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														
<b>15. Ներքին շարժեր, այդ թվում՝</b>														
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին														
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														
15.3. Էմիսիոն վնասի ծածկում														
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում														
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր														
<b>16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում -30- սեպտեմբերի- 2010 թ.</b>	7.200.000				52.075	(861)			3.072.895	(70.000)	3.054.109		10.254.109	

Հաշվետվության վավերացման ամսաթիվը \_\_13.10.10թ\_\_

ԿՏ

Բանկի վարչության նախագահ  
(գործադիր տնօրեն)  
Գլխավոր հաշվապահ

Էմիլ Սողոմոնյան  
Ալվարո Սկրտումյան

**«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ**  
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

<b>ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>Ծանոթագրություն</b>	<b>Նախորդ ժամանակաշրջան</b>	<b>Հաշվետու ժամանակաշրջան</b>
<b>1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>x</b>	<b>x</b>
<b>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</b>		<b>795,042</b>	<b>933,032</b>
Ստացված տոկոսներ		1,033,886	1,707,616
Վճարված տոկոսներ		(226,812)	(579,426)
Ստացված կոմիսիոն գումարներ		106,465	127,278
Վճարված կոմիսիոն գումարներ		(71,985)	(71,536)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		8,913	3,988
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնականություններից օգուտ/(վնաս)		294,458	191,213
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		6,474	115
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(236,118)	(250,899)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(120,239)	(195,317)
<b>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</b>		<b>(1,905,212)</b>	<b>(4,272,131)</b>
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(3,101,921)	(4,508,480)
այդ թվում՝		(2,119,599)	(4,154,377)
վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)			
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		168,915	(853,616)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)			
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		(1,151,237)	499,513
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		1,196,709	236,349
այդ թվում՝		752,072	(314,603)
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)			
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		444,637	550,952
<b>Ձուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը</b>		<b>(1,110,170)</b>	<b>(3,339,099)</b>
Վճարված շահութահարկ		(271,654)	(58,648)
<b>Ձուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>(1,381,824)</b>	<b>(3,397,747)</b>
<b>2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		<b>x</b>	<b>x</b>
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կառնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)			4,485
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(22,234)	(102,311)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում			1,142
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից			
<b>Ձուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		<b>(22,234)</b>	<b>(96,684)</b>
<b>3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		<b>x</b>	<b>x</b>
Վճարված շահաբաժիններ			(70,000)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)			
Բանկի կողմից բողոքարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		2,625,006	3,420,664
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
<b>Ձուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>		<b>2,625,006</b>	<b>3,350,664</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		100,764	3,627
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</b>		<b>1,321,712</b>	<b>(140,140)</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	4,730,731	6,034,849
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	6,052,443	5,894,709

Բանկի վարչության նախագահ  
 (գործադիր տնօրեն)  
 Գլխավոր հաշվապահ  
 Հաշվետվության վավերացման ամսաթիվը \_\_\_\_\_ 13,10,10թ. \_\_\_\_\_  
 ԿՏ

Էմիլ Սողոմոնյան  
 Ալվարդ Սկրտումյան

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

(եռամսյակային)

**«Պրոմբեյ բանկ» ՍՊԸ**  
**01/07/10 30/09/10**

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	7.200.000	50,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	9.996.795	5,000,000	խախտում առկա չէ
Ն <sup>1</sup> Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	45.60%	12%	խախտում առկա չէ
Ն <sup>2</sup> Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	27.10%	15%	խախտում առկա չէ
Ն <sup>2</sup> Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	200.80%	60%	խախտում առկա չէ
Ն <sup>3</sup> Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	14.20%	20%	խախտում առկա չէ
Ն <sup>3</sup> Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	61.70%	500%	խախտում առկա չէ
Ն <sup>4</sup> Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	4.10%	5%	խախտում առկա չէ
Ն <sup>4</sup> Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	11.20%	20%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը			
ՀՀ դրամով	x	8%	խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով	x	12%	խախտում առկա չէ
Եվրոյով	x	12%	խախտում առկա չէ
Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	0.63%	10%	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը			
ԱՄՆ դոլարով	0.48%	7%	խախտում առկա չէ
Եվրոյով	0.01%	7%	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	0.03%	7%	խախտում առկա չէ
Այլ	x	x	x

Բանկի վարչության նախագահի  
 (գործադիր տնօրեն)

Է. Սողոմոնյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13.10.2010թ.

Գլխավոր հաշվապահ

Ա. Սկրտովյան



## «ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» ՍՊԸ

30 Սեպտեմբերի 2010 թ.

(տվյալներն արտացոլված են 1000 դրամով)

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ձև թիվ 5)

#### Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում»

1.1. «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ն ստեղծվել է Բանկի հիմնադիրների ընդհանուր ժողովի որոշմամբ 1990թ. հունիսի 1-ին կնքված հիմնադիր պայմանագրի համաձայն, և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով:

1) Բանկն ունի իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և այդ գործունեության հետ կապված պարտականություններ, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, համաձայնագրեր, ստորագրել արձանագրություններ: Բանկը ՀՀ օրենսդրության շրջանակներում կարող է՝

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ,

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

ե) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ ,

զ) թողարկել, գնել, վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր,

է) ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեություն իրականացնել,

ժ) գնել , վաճառել թանկարժեք մետաղների բանկային ձուլակտորներ և հուշադրամ, արտարժույթ, այդ թվում կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

ի) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ) , ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, արժեթղթեր և այլ արժեքներ:

2) Բանկն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում : Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, որոնք գործում են Բանկի կանոնադրության պահանջների շրջանակներում և ձեռք են բերում կարգավիճակ Հայաստանում և արտասահմանում, Օրենքով սահմանված համապատասխան գրանցում ստանալուց հետո :

#### 1.2. Կորպորատիվ կառավարում.

Բանկի խորհուրդն իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:Բանկի խորհուրդը ընտրված և կազմված է հինգ անդամից: Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող գործունակ անձը, որը համապատասխանում է ՀՀ դրժող օրենքների և ՀՀ ԿԲ իրավական ակտերի չափանիշներին: Խորհրդի անդամները ընտրվում են բանկի տարեկան ընդհանուր ժողովում, բանկի ներկա մասնակիցների կողմից.

Ներսիսյան Գագիկ – Խորհրդի նախագահ,  
Համազասայան Եղիշե-Խորհրդի անդամ,  
Հովսեփյան Անուշավան -Խորհրդի անդամ,  
Կարապետյան Ավետիք-Խորհրդի անդամ,  
Գևորգյան Գեղամ-Խորհրդի անդամ:

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է բանկի Վարչության Նախագահը, իսկ որոշ հարցերի կարգավորումը ,համաձայն Կանոնադրության, իրականացնում է Բանկի Վարչությունը.

Սողոմոնյան Էմիլ-Վարչության Նախագահ,  
Հակոբյան Արմեն-Վարչության Նախագահի 1-ին տեղակալ, Վարչության անդամ,  
Մկրտումյան Ալվարդ-Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ,  
Պետրոսյան Հայկ – Վարչության Նախագահի տեղակալ, Վարչության անդամ,  
Ալեքսանյան Հայրապետ – Վարկավորման և միջոցների ներգրավվման Վարչության պետ, Վարչության Նախագահի տեղակալ, Վարչության անդամ,  
Եղիազարյան Կարեն – Միջազգային հարաբերությունների, պլաստիկ քարտերի Վարչության պետ,  
Վարչության Նախագահի տեղակալ, Վարչության անդամ:

«Պրոմեթեյ Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է , որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

Բանկի հիմնադիրներն են «Ձակնեֆտեգազատրոյ-Պրոմեթեյ» ԲԲԸ-ն, որն ունի ձայնի իրավունք տվող բաժնեմասերի 92.25% մասնակցություն, և Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վազգեն Գևորգյանը, որն ունի ձայնի իրավունք տվող բաժնեմասերի 7.75% մասնակցություն:

Բանկի խորհուրդը տարեկան ժողովի նիստում քննարկում և հաստատում է բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը, որտեղ ներառված են լինում նաև խորհրդի անդամների և բանկի ղեկավարների վարձատրության չափի սահմանումները:

Բանկի խորհուրդը տարեկան ժողովի նիստում քննարկում և տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին, ինչպես նաև արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրման չափի սահմանումը:

## **Ծանոթագրություն 2. «Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը»**

«Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ /այսուհետ՝բանկ/ հաշվապահական հաշվառումը վարում է հաշվապահական հավառումը կարգավորող իրավական ակտերի («Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հաշվապահական հավառմանը վերաբերող այլ օրենքներ, Հաշվապահական Հաշվառման Միջազգային ստանդարտներ և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր) համաձայն:

Բանկի ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, ինչպես նախատեսված է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ, ներառում է՝

- ա) հաշվետվություն ֆինանսական դրության մասին ,
- բ) հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ,
- գ) հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին ,
- դ) հաշվետվությունը դրամական միջոցների հոսքերի մասին,
- ե) ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Բանկը տարեկան ֆինանսական հաշվետվությունները (ֆինանսական հաշվետվությունների փաթեթը) հիմնադրին է ներկայացնում մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտ ամսվա 15-ը, իսկ հարկային տեսչություն՝ մինչև ապրիլի 15-ը:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացվում են՝ դասակարգելով դրանք ըստ գործառույթի, իսկ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ ըստ բնույթի:

Տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները, որոնցից յուրաքանչյուրը բացահայտվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝

ա) շահույթ կամ վնաս՝ սովորական գործունեությունից,

բ) շահույթ կամ վնաս՝ արտասովոր հողվածներից:

Սովորական գործունեությունը ցանկացած գործունեություն է, որն իրականացվում է բանկի կողմից, որպես իր գործունեության բաղկացուցիչ մաս, և այնպիսի առնչվող գործունեություն, որը բանկն իրականացնում է իր գործունեության զարգացման համար, կապված է կամ առաջանում է իր գործունեությունից: Սովորական գործունեությունից առաջացող եկամուտները և ծախսերը, իրենց հերթին, ելնելով դրանց բնույթից, բանկի համար դրանց հարաբերական կարևորությունից և կրկնման հաճախականությունից, բաժանվում են գործառնական և ոչ գործառնական եկամուտների և ծախսերի:

Արտասովոր հողվածները եկամուտներ կամ ծախսեր են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերվում են բանկի սովորական գործունեությունից, հետևաբար, չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերաբար կրկնվելը և որոնք բանկի վերահսկողությունից դուրս են:

Արտարժույթով գործարքն այնպիսի գործարք է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կատարում (կարգավորում): Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով (այսուհետ՝ դրամ)՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով դրամի և արտարժույթի միջև գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարած միջին շուկայական փոխարժեքը:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- արտարժույթով դրամային հողվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման փոխարժեքը.
- արտարժույթով սահմանված ոչ դրամային հողվածները ներկայացվում են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Դրամային հողվածները առկա դրամական միջոցներն են, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվները և պարտավորությունները: Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները հաշվառելու նպատակով դրամային հողվածներ են համարվում նաև արտարժույթով տրված և ստացված կանխավճարները:

Ոչ դրամային հողվածները հաշվեկշռի բոլոր հողվածներն են՝ բացառությամբ առկա դրամական միջոցների, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվների և պարտավորությունների:

Որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարած միջին շուկայական փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հողվածների մարման արդյունքում կամ, երբ Բանկի դրամային հողվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ

Ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, իսկ հետաձգված հարկային ակտիվը՝ բոլոր նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների համար՝ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումը, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք, ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չպետք է զեղչվեն (դիսկոնտավորվեն):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և պետք է ներառվեն տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ:

Բանկը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է միայն այն դեպքում, եթե ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և մտադիր է կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ֆինանսական գործիքը ցանկացած պայմանագիր է, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալի գործիք:

Ֆինանսական ակտիվը ցանկացած ակտիվ է, որը՝

ա) դրամական միջոց է,

բ) մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու պայմանագրային իրավունք է,

գ) մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքների փոխանակման պայմանագրային իրավունք է,

ե) այլ կազմակերպության սեփական կապիտալի գործիք է:

Ֆինանսական պարտավորությունը ցանկացած պայմանագրային պարտականություն է մեկ այլ կազմակերպությանը դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու (վճարելու), կամ՝ մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքներ փոխանակելու համար:

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր հաշվեկշռում ճանաչում է միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Բանկը պետք է ապահովի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվի մի մասը միայն այն դեպքում, երբ բանկը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը): Բանկը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե այն իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ բանկը հրաժարվում է այդ իրավունքներից:

Ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման ժամանակ պետք է չափվի սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրա դիմաց տրված փոխհատուցման իրական արժեքը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները պետք է չափվեն իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են կատարվել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ ֆինանսական ակտիվների, հետևյալ կատեգորիաների՝

ա) բանկի կողմից տրամադրված փոխառություններ (վարկ) և դեբիտորական պարտքեր, որոնք չեն պահվում առևտրական նպատակներով,

բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,

գ) ցանկացած ֆինանսական ակտիվ, որը գործող շուկայում չունի գնանշված շուկայական գին և որի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավաստորեն չափել,

դ) որպես հեջավորման գործիք և հեջավորված հոդված նախատեսված ֆինանսական ակտիվներ (որոնք չափվում են հեջի հաշվառման պահանջների համաձայն):

Այն ֆինանսական ակտիվները, որոնց նկատմամբ չի կիրառվում իրական արժեքով գնահատումը և որոնք ունեն ֆիքսված մարման ժամկետ, պետք է չափվեն ամորտիզացված արժեքով:

Այն ֆինանսական ակտիվները, որոնց նկատմամբ չի կիրառվում իրական արժեքով գնահատումը և որոնք չունեն ֆիքսված մարման ժամկետ, պետք է չափվեն սկզբնական արժեքով:

Ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման ժամանակ պետք է չափվի սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրա դիմաց ստացված փոխհատուցման իրական արժեքը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման մեջ: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորություններից, պետք է չափվեն ամորտիզացված արժեքով, իսկ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները պետք է չափվեն իրական արժեքով, բացառությամբ նրանից, որոնց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Այսպիսի առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները պետք է չափվեն սկզբնական արժեքով:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:-

Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները դրանք այն ֆինանսական ակտիվներն են, որոնք ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիվերսյին հավելագների (մարժաների) կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով:

Ֆինանսական ակտիվը պետք է դասակարգվի որպես առևտրական նպատակներով պահվող, եթե այն, անկախ դրա ձեռքբերման պատճառից, այնպիսի պորտֆելի մի մաս է, որի համար առկա են կարճ ժամկետում շահույթ ստանալու որոշակի ուղիներ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները այն ֆինանսական ակտիվներն են, որոնք բանկի կողմից տրամադրված փոխառություններ (վարկ) և դեբիտորական պարտքեր չեն, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ չեն, կամ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ չեն:

Ռեպո (հակադարձ ռեպո) համաձայնագրերի կնքման դեպքում գործարքի մի կողմը հանդես է գալիս որպես արժեթղթեր վաճառող՝ դրանք համաձայնագրում նշված ժամկետում վաճառքի գնով հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ մյուս կողմը՝ որպես գնորդ՝ պարտավորվելով համաձայնագրում նշված ժամկետում դրանք վերավաճառել առաջին կողմին: Ռեպո գործարքի կնքման պահից արժեթղթի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է գնորդ բանկին, և կնքման օրը ավանդատունը վաճառողի «դեպո» հաշվից գնորդի «դեպո» հաշվին է փոխանցում հայտում նշված քանակությամբ արժեթղթեր: Գործարքի մարման օրը ավանդատունը գնորդի «դեպո» հաշվից էտ է փոխանցում հայտում նշված արժեթղթերը վաճառողի «դեպո» հաշվին:

Ածանցյալ ֆինանսական գործիքները այն գործիքներն են, որոնց արժեքը փոփոխվում է ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, արժեթղթի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, վարկունակության կամ համանման այլ փոփոխականի

փոփոխությունների, որը չի պահանջում սկզբնական գուտ ներդրում կամ էլ պահանջում է աննշան սկզբնական ներդրում՝ պայմանագրերի այլ տեսակների համեմատ, և որոնց գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին:

Բանկը վարկային (փոխառության) պայմանագրով պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրա դիմաց: Վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր, որտեղ հստակ սահմանված է լինում տոկոսի չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը: Տոկոսները վճարվում են յուրաքանչյուր ամիս, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե վարկային (փոխառության) պայմանագիրը կնքված է փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու պայմանով, փոխառուն պարտավոր է ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխառուի վերահսկողության հնարավորությունը: Եթե փոխառուի կողմից պայմանագրով նշված պարտավորությունը չի կատարվում, ապա բանկը պարտապանի նկատմամբ կիրառում է տուժանքներ:

Ակտիվների արժեզրկումը կամ արժեզրկումից կորուստը այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարին: Բանկը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, թե առկա է, արդյոք, որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ գոյություն ունի, ապա բանկը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Գնահատելիս, թե առկա է, արդյոք, որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել, Բանկը պետք է դիտարկի առնվազն հետևյալ հայտանիշները՝

- ա) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակի կամ սովորական օգտագործման արդյունքում.
- բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան բանկի համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ այն շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում, որտեղ գործում է այդ բանկը, կամ այն շուկայում, որի համար նախատեսված է տվյալ ակտիվը.
- գ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շուկայական տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատուցադրույքները (հատուցադրույք՝ գործունեությունից ստացված շահույթը հարաբերած գործունեությունում օգտագործված ակտիվների կամ ներդրումների արժեքին(արտահայտված տոկոսներով)) աճել են, և հավանական է, որ այդ աճը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս, և էականորեն կնվազեցնի ակտիվի փոխհատուցվող գումարը:

Բանկը հաշվետու ամսվա վերջին բանկային օրը, համաձայն ՀՀ ԿԲ 27.04.99թ. ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի, դասակարգում է բոլոր ակտիվները : Բանկը ակտիվների



հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ՝ ընդհանուր և հատուկ պահուստների համար: Անհուսալի ակտիվներն անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված այն ակտիվներն են, որոնց հաշվառումը հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Եթե ակտիվը ճանաչվում է անհուսալի, ապա այն նույն օրվա ընթացքում դուրս է գրվում բանկի հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին, և բանկը շարունակում է հաշվառել այն ծանուցման համապատասխան հաշիվներում: Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:

Չաշխատող ակտիվները, այդպիսին դասակարգվելուց սկսած, հաշվառվում են ոչ կուտակային մեթոդով, ինչը նշանակում է, որ այն տոկոսը, որը կուտակվել է, բայց չի հավաքագրվել, այլևս չի կարող գրանցվել որպես տոկոսային եկամուտ: Այդ ակտիվների գծով հաշվեզրկված տոկոսները գրանցվում են որպես «չճանաչված տոկոսային եկամուտ» և ենթակա են հաշվեկշռից դուրս գրման՝ համապատասխան ակտիվը անհուսալի ճանաչելու պահին: Հաշվեզրման սկզբունքը վերականգնվում է միայն ժամկետանց հիմնական գումարի և տոկոսների մարումից հետո:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները այն ֆինանսական ակտիվներն են, որոնք ենթադրում են ֆիքսված կամ որոշակի վճարումներ, ունեն ֆիքսված մարման ժամկետ, բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, և բանկի կողմից տրամադրված փոխառություններ (վարկ) և դեբիտորական պարտք չեն: Վերը նշված ֆինանսական ակտիվները, չափվում են ամորտիզացված արժեքով (ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան և հանած անհավաքագրելիության գծով դուրս գրված մարումները) կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որով մինչև մարման ժամկետը դրամական միջոցների ակնկալվող բոլոր հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի ընթացիկ գուտ հաշվեկշռային արժեքը:

Հաշվապահական հաշվառման նպատակներով հեջավորում նշանակում է հեջավորման մեկ կամ ավելի գործիքների նախատեսում այնպես, որ դրանց իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցի հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը: Հեջի հաշվապահական հաշվառման ժամանակ հեջավորման գործիքի և համապատասխան հեջավորվող հոդվածի իրական արժեքների փոփոխությունների՝ միմյանց փոխհատուցող արդյունքները, համաչափորեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես գուտ շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցները այն նյութական ակտիվներն են, որոնք առկա են բանկում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով որն իր մեջ ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Բանկի ղեկավարի կողմից սահմանված դեպքերում հիմնական միջոցների մուտքագրումը, ինչպես նաև շահագործման հանձնումը բանկում իրականացվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

ա) բանկի կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը, որը գնահատվում է՝ նկատի ունենալով ակտիվի ակնկալվող հզորությունը (աշխատանքների, ծառայությունների) և ֆիզիկական ծավալը.

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, որը կախված է ակտիվի վերանորոգումից և սպասարկումից,

գ) տեխնիկական հնացածությունը, որն առաջանում է ակտիվից ստացվող ծառայությունների նկատմամբ շուկայի պահանջարկի նվազումից: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունն արտահայտվում է ժամկետով: Մաշվածության հաշվարկման կիրառվող մեթոդն արտացոլում է այն մոդելը, որով բանկը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները: Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների միավորը դուրս է գրվում հաշվապահական հաշվեկշիռից, երբ այն օտարվում է կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում: Հիմնական միջոցների դուրսգրումն իրականացվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից:

Ոչ նյութական ակտիվները ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվներն են, որոնք, որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք՝ վերահսկվում են բանկի կողմից. պահվում են բանկում՝ ծառայություններ մատուցելու և վարչական նպատակներով օգտագործելու համար. ունեն սահմանափակ օգտակար ծառայության ժամկետ:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան՝ ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարի պարբերական բաշխումն է նրա օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվների հաշվառումը տարվում է հիմնական միջոցների հաշվառման ակզբունքով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամանակահատվածը սահմանված է հետևյալ սկզբունքով.

-շենքերի շինությունների համար՝ 40 տարի ,

-կահույքի համար՝ 10 տարի,

-համակարգչային տեխնիկայի համար՝ 3 տարի ,

-գրասենյակային գույքի համար՝ 5 տարի ,

-հաղորդակցման միջոցի համար՝ 5 տարի ,

-փոխադրամիջոցների համար՝ 5 տարի ,

մինչև 50 000 դրամ արժողությամբ հիմնական միջոցների համար՝ 1 տարի :

Բանկում այլ բանկերի և հաճախորդների միջոցները հաշվառվում են նախօրոք՝ բանկային հաշվի պայմանագրով կնքված և բացված հաշիվներում: Բանկային հաշվի պայմանագրով բանկը պարտավորվում է ընդունել և հաճախորդի բացած հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու , համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ հաճախորդի կարգադրությունները: Բանկը իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ, իր դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ:

Ռիսկի կառավարումը կարևորագույն տարր է համարվում բանկային գործառնությունների իրականացման առումով:

2007թ-ից Բանկում կանոնակարգվել է ռիսկերի կառավարման գործընթացը. Բանկի խորհրդի կողմից հաստատվել է «Ռիսկերի կառավարման քաղաքականությունը», որը իրենից ներկայացնում է միջոցառումների ամբողջություն՝ ուղղված վնասների առաջացման վտանգի բացահայտմանը, ռիսկերի նվազարկմանը (միմիմիզացիա), հնարավոր կորուստների վերացմանը և բացահայտված վնասների՝ սեփական կապիտալի վրա ազդեցության հնարավորինս նվազեցմանը: Բանկում ռիսկերի կառավարման հիմնական նպատակներն են՝ հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառումը կամ նվազագույնին հասցնելը, շահութաբերության, անվտանգության և վճարունակության գործակիցների ընդունելի հարաբերակցության սահմանումը և պահպանումը:

Բանկում ռիսկերի կառավարման նպատակներին հասնելու համար նախատեսվում է հետևյալ խնդիրների լուծումը.

- Ø Բանկի գործունեության ընթացքում առաջացող բոլոր հնարավոր ռիսկերի ժամանակին բացահայտում և դրանց դասակարգում,
- Ø ռիսկերի առանձին տեսակների վրա ազդող գործոնների բացահայտում,
- Ø առանձին ռիսկերի որակական և քանակական գնահատում,
- Ø ռիսկերի ընդունելի սահմանաչափերի հաստատում,
- Ø ռիսկերի կառավարման ներքին հսկողության ձևերի հաստատում,
- Ø ռիսկերի կառավարման նպատակով համապատասխան միջոցառումների մշակում,
- Ø մշակված միջոցառումների իրականացման ընթացքի վերահսկում:

Ռիսկերի կառավարման հիմնական մեթոդներ են.

- Ø կանոնակարգումը,
- Ø մոնիտորինգը,
- Ø դիվերսիֆիկացումը,
- Ø լիմիտավորումը,
- Ø ռիսկերի փոխանցումը՝ հեջավորումը և ապահովագրումը,
- Ø կորուստների ծածկման պահուստի ձևավորումը,
- Ø սթրես սցենարների վերլուծությունը,
- Ø ներքին հսկողության ապահովումը գործող ընթացակարգերի պահպանման միջոցով,
- Ø հաշվետվությունների ձևերի տրամադրման պարբերականության սահմանումը:

Բանկի գործունեության բնույթից/առանձնահատկությունից ելնելով՝ գործունեությանն առնչվող ռիսկեր են համարվում իրացվելիության, վարկային, շուկայական, այդ թվում՝ տոկոսադրույքի, արժույթային, արժեթղթերի պորտֆելի ռիսկերը: 2008թ ընթացքում վերը նշված ռիսկերի ազդեցությունը բանկի ֆինանսական ցուցանիշների վրա եղել է ոչ էական:

Ներքոհիշյալ տվյալների նախորդ ժամանակաշրջանում արտացոլված են «Գրանթ Թորնթոն Ամիս» ՍՊԸ Աուդիտորական Ընկերության կողմից ստուգված և հաստատված 31.12.2009թ. տվյալները:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

**30 սեպտեմբեր 2010 30 սեպտեմբեր 2009**

ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	<b>361.31</b>	<b>384.28</b>
ՀՀ դրամ/1 Եվրո	<b>492.39</b>	<b>562.24</b>

### 3.«Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

#### Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	21.087	3.547
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	1.580.129	1.027.820
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	38.566	10.142
Տոկոսային եկամուտ «Ռ-Եսյո» պայմանագրերից	94.161	7.385
Այլ տոկոսային եկամուտ	5.970	3.625
Ընդամենը	1.739.913	1.052.519

#### Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպութ-ից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	7.297	12.426
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	129.653	86.907

Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	459.452	199.794
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	31	-
Այլ տոկոսային ծախսեր	1.755	1.253
Ընդամենը	598.188	300.380
<b><u>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</u></b>	<b>1.141.725</b>	<b>752.139</b>

**4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»**

<b><u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</u></b>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Գրամարկղային գործառնություններից	12.974	8.812
Հաշվարկային ծառայություններից	52.159	39.563
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	9.762	5.752
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	18.502	22.217
Վճարային քարտերի սպասարկումից	23.786	21.153
Այլ կոմիսիոն վճարներ	10.095	8.968
Ընդամենը	127.278	106.465
<b><u>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</u></b>	Հաշվետու	Նախորդ

	Ժամանակաշրջան	Ժամանակաշրջան
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	28.831	13.776
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	22.054	17.553
Երաշխիքների, հոժարագրերով, սկրեդիտիվներով գործառնությունների, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	593	2.899
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	719	25.913
Այլ կոմիսիոն վճարներ*	19.339	11.844
Ընդամենը	71.536	71.985
<b>Ստացված գուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>	<b>55.742</b>	<b>34.480</b>

**5. «Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից»**

<b>Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից</b>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից գուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից	-	1.868
պարտքային արժեթղթերից	-	-
աժանցյալներից	-	1.868
	-	-
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից գուտ եկամուտ	-	(265)

Ընդամենը	-	1.603
----------	---	-------

Վաճառքի համար մատչելի ներդրումներից

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից		831
պարտքային արժեթղթերից	-	-
ածանցյալներից		831
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	-	(2.613)
Ընդամենը	-	(1.782)

Արտարժույթային գործառնություններից

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	191.213	294.457
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	3.628	101.603
Ընդամենը	194.841	396.060

Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	194.841	395.881
--	---------	---------



**6. «Այլ գործառնական եկամուտ»**

<u>Այլ գործառնական եկամուտ</u>	Հաշվետու ժամանակաշրջա	Նախորդ ժամանակաշրջան
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	14.725	31.433
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	44.978	47.848
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	1.142	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-
Արտասովոր եկամուտներ (առկայության դեպքում)*	-	136
Այլ եկամուտներ**	13.355	11.331
Ընդամենը	74.200	90.748

\*\* Այլ եկամուտներում ներառված է բանկի վարչական շենքի՝ ՀՀ ԿԲ թույլտվությամբ, վարձակալության տրված տարածքի վարձավճարը :

7. «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ»

<u>Բանկերի նկատմամբ պահանջների գծով</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	90.369	127.044
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(90.369)	(127.044)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-
<u>Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	1.634	2.762
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(1.634)	(2.762)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված	-	-

գումարների վերադարձ		
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

<u>Հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների գծով</u>	Հաշվետու ժամանակաշրջան ն	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	104.345	93.648
Պահուստին կատարված մասհանումներ	247.576	707.807
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(165.491)	(707.475)
Պահուստին կատարված գուտ մասհանումներ	82.085	332
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	115	6.472
Պահուստի օգտագործում	(2.676)	-
Վերջնական մնացորդ	183.869	100.452

<u>Ներդրումների գծով</u>	Հաշվետու ժամանակա- շրջան	Նախորդ ժամանակա- շրջան
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	-	-

Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	-	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

<u>Այլ ակտիվների գծով</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	1.311	788
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(1.311 )	(788)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-

<u>Վարկային ռիսկ պարունակող</u> <u>հետհաշվեկշռային հոդվածների գծով</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին կատարված մասհանումներ	19.496	15.649
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ	(19.496)	(15.649)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	-	-
Վերջնական մնացորդ	-	-
<u>Ընդամենը զուտ մասհանումներ</u> <u>պահուստների</u>	<u>(82.085)</u>	<u>(332)</u>

#### **8. «Ընդհանուր վարչական ծախսեր»**

<u>Ընդհանուր վարչական ծախսեր</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	227.839	211.478
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	26.694	25.303
Իերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	1.695	932
Գործուղման ծախսեր	1.510	3.152

Գործառնական վարձակալության գծով ծախսեր	42.527	40.522
Ապահովագրության ծախսեր	-	-
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	4.217	3.159
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	35.149	29.679
Առդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	8.998	8.140
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	39.130	35.437
Տրանսպորտային ծախսեր	5.525	4.665
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	17.032	14.345
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	16.957	10.521
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	462	-
Այլ վարչական ծախսեր**	25.438	17.424
	453.173	404.757
<b>Ընդամենը</b>		

9. «Այլ գործառնական ծախսեր»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծնարված տուգանքներ և տույժեր	3.048	155
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	5.856	8.018
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	15.176	8.469
Նակտորինգի գծով ծախսեր	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	92.552	90.159
Կորուստներ նյութական ակտիվների արժեզրկումից	-	-
Արտասովոր ծախսեր** (առկայության դեպքում)	-	75
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	3.586	4.375
Այլ ծախսեր***	10.232	14.022
	130.450	125.273
<b>Ընդամենը</b>		

## 11. Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
Ընթացիկ հարկ	161.797	126.086
Հետաձգված հարկ	(174)	5.808
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս</b>	<b>161.623</b>	<b>131.894</b>

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% : ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:



Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2009	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2010
Կուտակված ծախսեր և այլ պահուստներ	2.773	-	-	2.773
Վարձակալած հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների ամորտիզացիայի ճշգրտում	1.018	-	-	1.018
Այլ ակտիվների արժեզրկումից պահուստներ	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական արժեքի ճշգրտում	565	900	(915)	550
Առևտրային արժեթղթերի իրական արժեքի ճշգրտում	-	-	-	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>4.356</b>	<b>900</b>	<b>(915)</b>	<b>4.341</b>
Վարկեր և փոխատվություններ	( 2.327 )	2.327	-	-
Այլ ակտիվներ	( 2.529 )	(3.053)	-	( 5.582 )
Ապագա ժամանակաշրջանի եկամուտ	-	-	-	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն</b>	<b>(4.856)</b>	<b>(726)</b>	<b>-</b>	<b>( 5.582 )</b>
<b>Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(500)</b>	<b>174</b>	<b>(915)</b>	<b>( 1.241 )</b>

13. «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

<u>Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում</u>	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կանխիկ դրամական միջոցներ	2.332.528	1.663.980
Գրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	90.317	196.006
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	2.149.206	3.831.398
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում*	66.279	66.843
Հաշվեգրված տոկոսներ	-	-
<b>Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում</b>	<b>4.638.330</b>	<b>5.758.227</b>

\* ՀՀ ԿԲ-ում դեպոնացված գումարը իրենից ներկայացնում է **ԱրՔա** վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ **66.279 հազ. դրամ**:

Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ, որոնք ներառվում են դրամական հոսքերի մասին հաշվետվությունում.

1. ՀՀ ռեզիդենտներին	15.485.952/1584		272.081/5	6.373/2	1041/2	3.653/5
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)՝			-	-	-	-
1. Ռուսաստան	600/2					
3. ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)		-	-	-	-	-
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)			-	-	-	-
5. Ընդամենը	15.486.552/1586		272.081/5	6.373/2	1041/2	3.653/5

**Նախորդ հաշվետու ժամանակաշրջան**

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
	Ստանդարտ/ Ոչ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ /Միջին	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի



			ռիսկային		
Վարկեր, այդ թվում՝					
1. ՀՀ ռեզիդենտներին	8.690.085	74.890	-	-	-
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)՝	2.904	-	-	-	-
1. Ռուսաստան					
3. ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)՝	-	-	-	-	-
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	-	-	-	-	-
5. Ընդամենը	8.692.989	74.890	-	-	-

Ծանոթագրություն 32. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

### 32.1 Վարկային ռիսկ

#### Շուկայական ռիսկ

#### **Շուկայական ռիսկի վերլուծություն**

Շուկայական ռիսկը առաջանում է շուկայական տոկոսադրույքների գների փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Շուկայական ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթային տոկոսադրույքի և գների փոփոխության հետ կապված ռիսկերի հանրագումար: Բանկը առանձնահատուկ ուշադրություն է ներկայացնում արտարժույթային և տոկոսային ռիսկերին որոնք իրական վտանգ կարող են ներկայացնել բանկին:

**Արտարժույթի ռիսկ** - Արտարժույթային ռիսկը պայմանավորված է ապագայում արտարժույթի փոխարժեքի շարժման անորոշությունից այսինքն ազգային արժույթի գնի հարաբերակցությունից այլ արտարժույթների նկատմամբ: Արտարժույթային ռիսկ կարող է առաջանալ երբ արտարժույթային դիրքը (արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև տարբերությունն է՝ հաշվի առած հետհաշվեկշռային անավարտ գործարքների (սփոթ սկոպ ֆորվարդ և ֆյուչերսային) նկատմամբ պահանջները և պարտավորությունները) բաց է:

Արտարժույթային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժույթային շուկայի ուսումնասիրման արտարժույթային ռիսկի կանխատեսման արտարժույթային ռիսկի գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման արտարժույթային ռիսկի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման փուլերը որոնք սահմանված են բանկի ներքին ընթացակարգերում:

Արժույթային ռիսկերը զսպման նպատակով Բանկը սահմանել է արժույթային բաց դիրքերի սահմանաչափեր ըստ առանձին արժույթների որոնք վերահսկվում են օրական կտրվածքով: Բանկի արտարժույթային դիրքերի նորմատիվի առավելագույն չափը սահմանած է.

ա. յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 7 տոկոս

բ. բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 10 տոկոս:

Անվանում	Ներքին սահմանաչափ	31/12/09 թ		30/09/10 թ	
ԱՄՆ դոլար	7%	5.49%	0.48%		
Անգլիական ֆունտ ստեռլինգ	7%	0.01%	0.11%		
Եվրո	7%	0.03%	0.01%		
Ռուս.ռուբլի	7%	-0.20%	0.33%		
Շվեդարական ֆրանկ	7%	0.01%	0.00%		

Յուրաքանչյուր օր իրականացվում է արտարժույթների փոխարժեքների հետևանքով արտարժույթային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած եկամուտների և ծախսերի հաշվարկ յուրաքանչյուր արտարժույթի գծով: Արտարժույթային ռիսկի գնահատումը կատարվում է նաև ստանդարտ մեթոդաբանությամբ ըստ (ՀՀ ԿԲ-ի Կանոնակարգ 2-ի): Ինչպես նաև պարբերաբար իրականացվում է հնարավոր կորուստների գնահատում սթրես տեստերի միջոցով:

Բանկի կողմից ներկայացվում է բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

**Հաշվետու ժամանակաշրջան.**

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1435130	3120094	83107	4638331
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	799496	1459225	58487	2317208
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ	6484264	9219370		15703634
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	1162494			1162494
Մինչև մարման ժամկետը պահվող ֆին. ակտիվներ				
Այլ	1864774	4747		1869521
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>11746158</b>	<b>13803436</b>	<b>141594</b>	<b>25691188</b>
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	9062	1251866	85624	1346552
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1387703	4318759	58960	5765422
Այլ պարտավորություններ	151737	8172916		8324653
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>1548502</b>	<b>13743541</b>	<b>144584</b>	<b>15436627</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>10197656</b>	<b>59895</b>	<b>(2990)</b>	<b>10254561</b>

**Նախորդ հաշվետու ժամանակաշրջան.**

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և	1460846	3755104	542277	5758227

մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	1979468	956834	54984	2991286
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	5075655	5338112		10413767
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	309923			309923
Մինչև մարման ժամկետը պահվող ֆին. ակտիվներ				
Այլ	2015938	28346	706	2044990
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>10841830</b>	<b>10078396</b>	<b>597967</b>	<b>21518193</b>
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	16235	103317	562300	681852
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1410462	4702037	54911	6167410
Այլ պարտավորություններ	247105	4738293		4985398
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>1673802</b>	<b>9543647</b>	<b>617211</b>	<b>11834660</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>9168028</b>	<b>534749</b>	<b>(19244)</b>	<b>9683533</b>

\* «I խմբի արտարժույթի» կազմը- ՄԳՌ-ը ՄԳՌ-ի զամբյուղի մեջ մտնող արտարժույթներին շվեյցարական ֆրանկը կանադական դոլարը շվեդական կրոնը դանիական կրոնը ավստրալիական դոլարը և բանկային ոսկին (ՄԳՌ-ի զամբյուղի մեջ մտնում են ԱՄՆ-ի դոլարը Եվրոն ճապոնական իենը և անգլիական ֆունտ ստեռլինգը) :

\*\* «II խմբի արտարժույթի» կազմը - այլ արտարժույթներ :

**Տոկոսադրույքի ռիսկ -**

**Տոկոսադրույքի ռիսկը** այն ներկա կամ ապագա հավանականությունն է որ տոկոսադրույքի մակարդակի անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասական հետևանք ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:

Տարբերակում են տոկոսադրույքի ռիսկի չորս տեսակ.

- բազիսային ռիսկ
- եկամտաբերության կորի ռիսկ
- օպցիոնի (ընտրության) ռիսկ

- Ժամկետայնության ճեղքվածքի ռիսկ:

**Բազիսային ռիսկը** կապված է տարբեր տեսակի տոկոսադրույքների ապագա փոփոխությունների հետ: Բազիսային ռիսկը հիմնականում ի հայտ է գալիս երբ փոփոխվող տոկոսադրույքներով ներգրավված և տեղաբաշխված միջոցները կապված են տարբեր բազիսային տոկոսադրույքների հետ՝ որոնց միջև կատարյալ կորելյացիոն կապ գոյություն չունի:

**Եկամտաբերության կորի ռիսկն** առաջանում է երբ կորի փոփոխության հետևանքով (տարբեր մարման ժամկետայնությամբ տեղաբաշխված և ներգրավված միջոցների տոկոսադրույքների փոփոխություն՝ կապված մարման ժամկետայնությունից. օրինակ երկարաժամկետ պետական պարտատոմսերի տոկոսադրույքներն աճում են իսկ կարճաժամկետինը՝ նվազում) բանկի կապիտալի տնտեսական արժեքը և/կամ շահույթը բացասական ազդեցություն են կրում:

**Օպցիոնի** (ընտրության) ռիսկն առաջանում է երբ բանկը կամ բանկի հաճախորդն ունենում են ֆինանսական գործիքից ստացվող դրամական հոսքերի մակարդակը և/կամ ժամանակը փոփոխելու իրավունք բայց ոչ պարտավորություն: Օպցիոնի ռիսկ են պարունակում վարկերի գծով կանխավճարման իրավունքը ավանդների վաղաժամկետ դուրսբերումը վարկերի տոկոսադրույքների վերին սահմանը:

**Ժամկետայնության ճեղքվածքի ռիսկն** առաջանում է երբ բանկը միջոցներ է ներգրավում և տեղաբաշխում միևնույն բազիսային տոկոսադրույքներով սակայն որոշ ժամանակային ճեղքվածքով ըստ որի բանկի ներգրավված և տեղաբաշխված միջոցները համաձայնեցված չեն ըստ մարման կամ տոկոսադրույքների վերանայման ժամկետների:

Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով բանկի սպասվող հավանական կորուստները կամ օգուտները գնահատում են ամենատարբեր մոդելներով որոնցից կարևորվում են.

– տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի կամ տոկոսադրույքների վերանայման մոդել (այսուհետ GAP մոդել)

– դյուրացիայի մոդել:

**GAP մոդելը** թույլ է տալիս ստանալ տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա:

**Դյուրացիայի մոդելը** ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

GAP մոդելով վերլուծության արդյունքում գնահատվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ զգայուն պարտավորությունները հանվում են ակտիվներից՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի ճեղքվածքը (GAP) հաշվարկելու համար.

$$GAP = RSA - RSL \quad (1)$$

որտեղ

RSA- տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներն են

RSL- տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորություններն են

GAP- տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է:

Ճեղքվածքը կարող է լինել զրոյական բացասական և դրական: Բացասական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների աճը կբերի զուտ տոկոսային եկամտի նվազման: Ի հակադրություն վերջինիս դրական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների նվազումը կբերի զուտ տոկոսային եկամտի նվազման:

Սույն մեթոդիկայի հաշվարկում կատարվում են հետևյալ ենթադրությունները.

- ✓ դիտարկվող ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ այսինքն մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են բայց արդեն նոր գործող տոկոսադրույքով
- ✓ տոկոսադրույքների վերանայումը կատարվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի միջնակետում
- ✓ տարբեր մարման ժամանկետայնությամբ բոլոր ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքները փոփոխվում են միևնույն չափով այսինքն տեղի է ունենում ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժ:

Հաշվարկի արդյունքում գնահատվում է տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը առաջիկա եռամսյակի ընթացքում ստացվելիք զուտ տոկոսային եկամտի վրա:  
 Հաշվարկի համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$\Delta NII = \sum GAP_t * \Delta R * K \quad (2)$$

որտեղ

$\Delta NII$  - զուտ տոկոսային եկամտի փոփոխությունն է երեք ամսվա ընթացքում

$GAP_t$  – t ժամանակաշրջանի ճեղքվածքն է

$\Delta R$  – տոկոսադրույքի ենթադրվող տարեկան փոփոխությունն է

$$K = (90-t) / 365$$

Վերոնշյալ սահմանափակող ենթադրություններից ելնելով նպատակահարմար է տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա հաշվարկել առաջիկա երեք ամիսների համար:

Սույն մեթոդաբանությունում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կազմում չեն ընդգրկվում ցպահանջ ակտիվները և պարտավորությունները քանի որ վերջիններիս ցածր եկամտաբերության / ծախսատարության պատճառով դրանց տոկոսադրույքների էական փոփոխություններ չեն ենթադրվում:

Հաշվարկման տվյալների աղբյուր է հանդիսանում «Բանկերի հաշվետվությունները դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 9 հաշվետվությունը:

Հաշվարկում յուրաքանչյուր ժամանակահատվածի համար տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունները գտվում են ակտիվներից. այսպես վերցվում է «մինչև 30 օր» «31-ից 60 օր» և «61-ից 90 օր» մարման ժամկետայնություն ունեցող «Փոփոխվող տոկոսադրույքներով» և «Ֆիքսված տոկոսադրույքներով» ակտիվների և պարտավորությունների հանրագումարների տարբերությունը: Ստացված տվյալները տեղադրելով բանաձև (2)–ի մեջ հաշվարկվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա.

$$\Delta NII = (GAP_{15} * 75 / 365 + GAP_{45} * 45 / 365 + GAP_{75} * 15 / 365) * \Delta R \quad (3)$$

$GAP$  մոդելի հիման վրա կատարվում է նաև տոկոսադրույքի նկատմամբ բանկի զգայունության վերլուծություն որն ի տարբերություն վերը ներկայացված մոդելի ընդգրկում է նաև անտոկոս և ցպահանջ ակտիվներն ու պարտավորությունները:

Համաձայն այս վերլուծության  $GAP$ -ի հաշվարկում ընդգրկվում է «ցպահանջ» «մինչև 30 օր» «31-ից 60 օր» և «61-ից 90 օր» մարման ժամկետայնություն ունեցող «Փոփոխվող տոկոսադրույքներով» «Ֆիքսված տոկոսադրույքներով» և «Անտոկոս» ակտիվները և պարտավորությունները: Նշված ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների կումուլյատիվ ճեղքվածքը հարաբերվում է ակտիվներին (սովորաբար կոչվում է ճեղքվածքի հարաբերակցություն.  $GAP/ASSETS$ ) ինչը ցույց է տալիս տոկոսադրույքի ռիսկի ազդեցության ուղղությունը

(դրական կամ բացասական GAP) և ռիսկի նկատմամբ զգայունության աստիճանը (ճեղքվածքը ակտիվների որ տոկոսն է կազմում): Դրական կումուլյատիվ ճեղքվածքը վկայում է որ կարճաժամկետ հատվածում (երեք ամսվա ընթացքում) բանկը ունի ազատ դրամական միջոցներ որոնք կարող է տեղաբաշխել եկամտաբեր ակտիվների մեջ՝ չառաջացնելով իրացվելիության հիմնախնդիր: Հետևաբար դրական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բարենպաստ ազդեցություն թողնել բանկի եկամուտների վրա:

31/12/09թ դրությամբ

ΣGAPt 444601 հազ. դրամ

Տոկոսադրույքների հետևյալ փոփոխությունների արդյունքում

ΔR -1.0% 0.5%

<b>Շահույթ/Վնաս(-) ΔΠII</b>	-	4446	2223
-----------------------------	---	------	------

30/09/10թ դրությամբ

ΣGAPt 248725 հազ. դրամ

Տոկոսադրույքների հետևյալ փոփոխությունների արդյունքում

ΔR -1.0% 0.5%

<b>Շահույթ/Վնաս(-) ΔΠII</b>	-2487	1244	
-----------------------------	-------	------	--

Բանկը ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերլուծությունն ըստ տոկոսադրույքների վերանայման ժամկետների.

**Հաշվետու ժամանակաշրջան**

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավել	
	իսցումն	իսբերում	իսցումն	իսբերում	իսցումն	իսբերում	իսցումն	իսբերում	իսցումն	իսբերում	իսցումն	իսբերում
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ այդ թվում՝ վարկեր	797146											

-ավանդներ -ֆատկորինգ -լիզինգ -հետզմնան պայմանագրեր -այլ	797146											
Հաճախորդներին տրված վարկեր փոխառություններ այդ թվում՝	1701	9234	181792	5840	77331	149934	439037	939184	5192945	7845920	726045	19
- վարկեր - ավանդներ - ֆատկորինգ - լիզինգ - հետզմնան պայմանագրեր - այլ	1701	9234	181792	5840	77331	149934	439037	939184	5192945	7845920	726045	19
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր այդ թվում՝					326070		747318		45902			
- երկարաժամկետ պարտք. գործիքներ - կարճաժամկետ պարտք. գործիքներ - ավանդային հավաստագրեր - կապիտալի գործիքներ					326070		747318		45902			
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր												
Տեղաբաշխված այլ միջոցներ												
Ընդամենը	798847	9234	181792	5840	403401	149934	1186355	939184	5238847	7845920	726045	19
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ այդ թվում՝								149293				
- վարկեր - ավանդներ - ֆակտորինգ - լիզինգ - հետզմնան պայմանագրեր - այլ								149293				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ այդ թվում՝			111218	544361	1959	314429	51162	934072	112250	291143		
- ավանդներ - հետզմնան պայմանագրեր - այլ			111218	544361	1959	314429	51162	934072	112250	291143		



Բանկի կողմից թողարկված արժեթղթեր այդ թվում՝ - փոխարկելի արժեթղթեր - հիփոթեքային պարտատոմսեր - այլ պարտատոմսեր - ստորադաս փոխառություններ										7929795		
Ներգրված այլ միջոցներ										7929765		
<b>Ընդամենը</b>			111218	544361	1959	314429	51162	1083365	112250	8220908		
<b>Զուտ դիրք</b>	798847	9234	70574	(538521)	401442	(164495)	1135193	(144181)	5126597	(374988)	726045	19

**Նախորդ հաշվետու ժամանակաշրջան**

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	խցումն	իսվաքմտում	խցումն	իսվաքմտում	խցումն	իսվաքմտում	խցումն	իսվաքմտում	խցումն	իսվաքմտում	խցումն	իսվաքմտում
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ այդ թվում՝ - վարկեր - ավանդներ - ֆատկորինգ - լիզինգ - հետգնման պայմանագրեր - այլ	1974284											
	1974284											
Հաճախորդներին տրված վարկեր փոխատվություններ այդ թվում՝ - վարկեր - ավանդներ - ֆատկորինգ - լիզինգ - հետգնման պայմանագրեր - այլ	316		71697	10229	38521	145221	218023	189171	4130268	4783672	69225	155163
	316		71697	10229	38521	145221	218023	189171	4130268	4783672	692252	155163
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր այդ թվում՝ - երկարաժամկետ պարտք. գործիքներ - կարճաժամկետ պարտք. գործիքներ							97995		169351			
							97995		169351			

- ավանդային հավաստագրեր - կապիտալի գոծիքներ												
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր												
Տեղաբաշխված այլ միջոցներ												
<b>Ընդամենը</b>	1974600	-	71697	10229	38521	145221	316018	189171	4299619	4783672	692252	155163
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ այդ թվում՝ - վարկեր - ավանդներ - ֆակտորինգ - լիզինգ - հետգնման պայմանագրեր - այլ								97307  97307				
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ այդ թվում՝ - ավանդներ - հետգնման պայմանագրեր - այլ			1200	488234	5392	505835	37378	652078	115764	90681		
			1200	488234	5392	505835	37378	652078	115764	90681		
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր այդ թվում՝ - փոխարկելի արժեթղթեր - հիփոթեքային պարտատոմսեր - այլ պարտատոմսեր - ստորադաս փոխառություններ										4734541  4734541		
Ներգրաված այլ միջոցներ												
<b>Ընդամենը</b>			1200	488234	5392	505835	37378	749385	115764	4825222		
<b>Զուտ դիրք</b>	1974600		70497	(478005)	33129	(360614)	278640	(560214)	4183855	(41550)	692252	155163

Բանկի կողմից ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
<b>Ակտիվներ</b>				
<b>Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում</b>				
Պահանջներ բանկերի և այլ ֆին կազմ նկատմամբ այդ թվում` - միջբանկային վարկեր - միջբանկային ռեսյո - միջբանկային տոկոսային ավույ	8.3		6.3	
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	14.2	16.8	15.3
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10.7		7.2	
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր				
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին կազմ նկատմամբ		6.2		7
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	8.4	7.8	9.4	8.8

Պարտավորություններ բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով		8		8
---	--	---	--	---

**Գնային ռիսկ**

Գնային ռիսկը առաջանում է ֆինանսական գործիքների գների փոփոխության հետևանքով ընդ որում ինչպես առանձին արժեթղթերի կամ նրանց թողարկողներին հատուկ գործոնների այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոնների հետևանքով: Անյնուամենայնիվ գնային ռիսկի կառավարման նպատակով բանկի «Ներդրումային քաղաքականությամբ» սահմանված են որոշակի սահմանափակումներ որոնք ուղղված են նվազեցնել բանկի հնարավոր կորուստները այս ֆինանսական գործիքների մասով: Ինչպես նաև ամենամսյա վերլուծություններ են կատարվում այս ռիսկերի բացահայտման վերահսկման և չափման ուղղությամբ:

**32.3.Իրացվելիության ռիսկ**

**Իրացվելիությունը`** Բանկի ունակությունն է արագ և առանց կորուստների վերափոխել ակտիվները դրամական միջոցների ժամանակին իր բոլոր պարտքային և ֆինանսական պարտավորությունները կատարելու ինչպես նաև հաճախորդների ֆինանսական պահանջները բավարարելու նպատակով:

Բանկում իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն են`

**Ա** առաջնային պահուստները (կանխիկ դրամական միջոցներ թղթակցային հաշիվներ)

**Ա** երկրորդային պահուստները (պետական և այլ արժեթղթեր)

Բանկի իրացվելիության (ակտիվների և պարտավորությունների) կառավարման մեխանիզմները պետք է նպաստեն հետևյալ նպատակների իրականացմանը`

- ավելցուկային իրացվելիության նվազագույն մակարդակի ապահովում և իրացվելիության ցածր մակարդակի բացառում կայուն շահույթի ապահովման պայմաններում
- եկամտաբերության և իրացվելիության միջև օպտիմալ հարաբերակցության պահպանումը
- բանկային ռիսկերի ընդունելի մակարդակների ապահովումը:

Բանկի իրացվելիության (ակտիվների և պարտավորությունների) կառավարման մեխանիզմների ստեղծման և կատարելագործման նպատակով Բանկը պետք է ապահովի հետևյալ հիմնախնդիրների լուծումը՝

1. Ձևավորել ակտիվների օպտիմալ կառուցվածք (այդ թվում և վարկային պորտֆելի) ռեսուրսային (ցպահանջ և ժամկետային) բազային համապատասխան

2. Վերահսկել ակտիվների և պարտավորությունների՝

- Ø որակը
- Ø ծավալները
- Ø կառուցվածքը
- Ø նրանց եկամտաբերության և ծախսատարության մակարդակները

3. Սեփական կապիտալի մշտական ավելացումը

4. Պահպանել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվները թույլատրելի մակարդակի վրա

5. Կատարելագործել բանկային իրացվելիության (ակտիվների և պասիվների) կառավարման և վերահսկողության մեխանիզմներն ու մեթոդները:

Բանկի իրացվելիության (ակտիվների և պարտավորությունների) կառավարման հիմնական սկզբունքներն են՝

- Ø իրացվելիության և վճարունակության ապահովումը
- Ø տոկոսային մարժայի կառավարումը
- Ø ներգրավման և տեղաբաշխման ժամկետների կատարման ապահովումը (GAP)
- Ø ռիսկերի կառավարումը
- Ø ակտիվների վերահսկման համաձայնեցումը պարտավորությունների վերահսկման հետ (որպեսզի ակտիվների և պարտավորությունների կառավարումը լինի միասնական):

Ձևավորված նպատակների և գործողությունների ուղղություններից ելնելով՝ իրացվելիության կառավարման գործընթացում Բանկը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով

1. Բանկը կատարում է ընթացիկ իրացվելիության ամենօրյա վերահսկողություն: Բանկի իրացվելի ակտիվների ծավալի և վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Բանկի վարչությանը՝ մշակված ընթացակարգի համապատասխան:

2. Բանկը պլանավորում է ժամկետային իրացվելիությունը:

3. Իրացվելիության և եկամտաբերության միջև ծագած կոնֆլիկտը Բանկը լուծում է ի օգուտ իրացվելիության:

4. Ակտիվների տեղաբաշխման ժամանակ Բանկը խստագույնս հաշվի է առնում ժամկետային ռեսուրսների աղբյուրները և ծավալները չի տեղաբաշխում իր ակտիվները երկար ժամկետով եթե չունի համապատասխան ժամկետայնությամբ և ծավալների ռեսուրսային բազա:
5. Միջոցների չհիմնավորված կուտակումը բացառելու նպատակով Բանկը ներդրումներ բաժնետոմսերում և փայամասնակցություններում իրականացնում է Ներդրումային կոմիտեի եզրակացությունների և որոշումների հիման վրա:
6. Իրացվելիության լավագույն մակարդակի ապահովման նպատակով Բանկը կառավարում է իրացվելիությունը տարբեր մեթոդների կոմբինացիաներով կախված արտաքին միջավայրի (ֆինանսավարկային շուկայի) փոփոխություններից:
7. Իրացվելիության ցածր մակարդակը բացառելու նպատակով Բանկը պետք է ելնի այն հանգամանքից որ իրացվելիության ապահովման երկրորդային ռեսուրսների փոխարկումը առաջնային ռեսուրսների բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվների վաճառքի միջոցով պետք է կատարվի միայն բացառիկ դեպքերում քանի որ որպես կանոն բերում է ֆոնդային շուկայում գործառնություններից եկամուտների թերստացման: Իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովելու որոշումը կայացվում է Բանկի վարչության կողմից իր իրավասության սահմաններում:
8. Վաճառքի համար մատչելի արժեթղթերի պորտֆելի ձևավորման ժամանակ Բանկը պետք է հաշվի առնի որ պորտֆելի կազմը և կառուցվածքը պետք է դիտարկվի նաև որպես ընթացիկ իրացվելիության ապահովման գործիք:

**Հաշվետու ժամանակաշրջան**

Հոդվածի անվանումը	Չաշխատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	Ժամկետանց	Ժամկետային	ցայահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 12 ամիս	1-ից մինչև 3 տարի	3 տարուց ավելի		
<b>Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>										
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			4638330							4638330
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			1370329	898285					48594	2317208
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ	16940	270757		1013917	893323	1933244	11489555	85898		15703634
Արժեթղթեր այդ թվում՝ - առևտրային նպատակով պահվող				326070	194217	553101	46529		42577 42577	1162494 42577

- վաճառքի համար մատչելի - մինչև մարման ժամկետը պահվող - ռեպո համաձայնագրով վաճառվ				326070	194217	553101	46529			1199917
Այլ պահանջներ				68530						
<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>	16940	270757	6077189	2564342	1281757	3039446	11582613	85898	133748	23890196
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով	9234	241909	4432683	1052457	421165	1084469	4368118	2144807	48594	13803436
II խմբի արտարժույթով			141457	137						141594
Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով									48594	48594
Ֆիքսված տոկոսադրույքներով	10935	268560	1309718	2349882	887863	3039446	9966622	85898		17918924
Անտոկոս			4751324	1246170	194217					6191711
Պայմանագրային պահանջներ**				13	8087	14287	3557555	878394		4458336
<b>Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ</b>										
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ այդ թվում՝ - ցպահանջ ավանդներ - ժամկետային ավանդներ - այլ			9061 3379299 3379299	1188198 1198627 1198627 12055	114716 398283 398283 19492	34577 788628 788628	585 585			1346552 5765422 3379299 2352991 32132
Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի գծով					60123	163899	4316665	3632155		8172842
Այլ պարտավորություններ			149822							149822
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ			359435	3345	48692	206837	615504			1233813
<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>			3538182	2386825	573122	987104	4317250	3632155		15434638
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով			2207336	2162818	485976	953739	7933598			13743467
II խմբի արտարժույթով			58960	85625						144585
«Խոշոր» պարտավորություններ*										

			210004	1664121	213292	156462	7929765			10173644
Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով										
Ֆիքսված տոկոսադրույքներով			3342580	1175956	419946	823205	3660460			9422147
Անտոկոս			9003	2011946		82393				2103342
Պայմանագրային պարտավորություններ***										
<b>Չուտ իրացվելության ճեղքվածք</b>										
		270757	2539007	177517	708635	2052342	7265363	(3546257)	133748	8455558
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով	9234	241909	2225347	(1110361)	(64811)	130730	(3565480)	2144807	48594	59969
II խմբի արտարժույթով			82497	(85488)						(2991)
փոփոխվող տոկոսադրույքների համար									48594	48594
ֆիքսված տոկոսադրույքների համար	10935	268560	1300715	337936	887863	2957053	9966622	85898		15815582
<b>Կուտակային իրացվելության ճեղքվածք</b>	-	270757	2809764	2987281	3695916	5748258	13013621	9467364	9601112	

**Նախորդ հաշվետու ժամանակաշրջան**

Հոդվածի անվանումը	Չաշխատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	Ժամկետանց	Ժամկետային	ցյախանց	մինչև 3 ամիս	3ից մինչև 6 ամիս	6ից մինչև 12 ամիս	1ից մինչև 3 տարի	3 տարուց ավելի		
<b>Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>										
Կանխիկ և կանխիկին			5758227							5758227



հավասարեցված դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲում										
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			370946	2573273					47067	2991286
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	6863	25934		434022	612203	1054206	7642472	638067		10413767
Արժեթղթեր այդ թվում՝ առևտրային նպատակով պահվող վաճառքի համար մատչելի մինչև մարման ժամկետը պահվող ռեպո համաձայնագրով վաճառվ					97995	122503	46848		42577	309923
					97995	122503	46848		42577	42577
										267346
Այլ պահանջներ			267958							267958
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>6863</b>	<b>25934</b>	<b>6397131</b>	<b>3007295</b>	<b>808193</b>	<b>1299212</b>	<b>7736168</b>	<b>638067</b>	<b>132221</b>	<b>19741161</b>
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով	6832		4125966	907792	223342	460934	3310842	995621	47067	10078396
II խմբի արտարժույթով			597260	705						597965
Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով									47067	47067
Ֆիքսված տոկոսադրույքներով	7626	28815	339735	2625674	618387	1299212	7237975	638067		12795491
Անտոկոս			5892733	2629940	125050					8647723
Պայմանագրային պահանջներ**				262918	307853	572357	1849245	316269		3308642
<b>Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ</b>										
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ այդ թվում՝ ցպահանջ ավանդներ ժամկետային ավանդներ այլ			4019680	420829	1222018	394419	110464			6167410
			4019680	418356	1217428	394419	110464			2140667
				2473	4590					7063
Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի գծով							4735732			4735732
Այլ պարտավորություններ			95858	153808						249666
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ			267575	81500	4000		415973			769048

<b>ԸՆԴԱՍՏԵՆԸ</b>			<b>4131774</b>	<b>1240253</b>	<b>1222018</b>	<b>394419</b>	<b>4846195</b>			<b>11834659</b>
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով			2950782	513093	1197455	371842	4509101			9542273
II խմբի արտարժույթով			54912	562300						617212
«Խոշոր» պարտավորություններ*			2492461		725671		4509101			7727233
Այդ թվում՝ Փոփոխվող տոկոսադրույքներով										
Ֆիքսված տոկոսադրույքներով			4190999	510104	991134	388471	4571958			10652666
Անտոկոս			87894	2622526	4500					2714920
Պայմանագրային պարտավորություններ***										
<b>Զուտ իրացվելիության ճեղքվածք</b>										
		<b>25934</b>	<b>2265357</b>	<b>1767042</b>	<b>(413825)</b>	<b>904793</b>	<b>2889973</b>	<b>638067</b>	<b>132221</b>	<b>7906502</b>
Այդ թվում՝ I խմբի արտարժույթով	6832		1175184	394699	(974113)	89092	(1198259)	995621	47067	536123
II խմբի արտարժույթով			542348	(561595)						(19247)
փոփոխվող տոկոսադրույքների համար									47067	47067
ֆիքսված տոկոսադրույքների համար	7626	28815	251841	3148	613887	1299212	7237975	638067		10080571
<b>Կուտակային իրացվելիության ճեղքվածք</b>		<b>25934</b>	<b>2291291</b>	<b>4058333</b>	<b>3644508</b>	<b>4549301</b>	<b>7439274</b>	<b>8077341</b>	<b>8209562</b>	

Զուտ և կուտակային իրացվելիության ճեղքվածքները բացասական արժեքներ ունեն միայն ցպանանջի մասով որը բանկը կարող է փակել վաճառքի համար նախատեսված արժեթղթերի (պետական գանձապետական և ՀՀ ԿԲ արժեթղթեր) վաճառքով: Բանկի այս արժեթղթերի պորտֆելը հիմնական բաղկացած է կարճաժամկետ պարտատոմսերից որոնք շուկայում ունեն մեծ պահանջարկ ուստի կարելի առանց կորուստների այն վաճառել:

Բանկի վարչությունը Վարկային Ներդրումային և այլ կոմիտեները ստորաբաժանումները և ղեկավարները կոնկրետ ֆինանսական որոշումներ կայացնելիս առաջնորդվում են վերը նշված սկզբունքներով:

Բանկի ակտիվների և պարտավորությունների օպտիմալ և նպատակային կառուցվածքը սահմանվում է՝ ելնելով Բանկի ռազմավարությունից:

Եկամտաբերության և իրացվելիության օպտիմալ հարաբերակցության ապահովման համար սահմանվում են հետևյալ սահմանաչափերը

- Ս Վարկային ներդրումները պետք է կազմեն նվազագույնը Բանկի ընդհանուր ակտիվների 30%ը
- Ս Հիմնական միջոցները չեն կարող գերազանցել Բանկի ընդհանուր ակտիվների 30%ը
- Ս Եթե մեկ խոշոր պարտատիրոջ (որոնց նկատմամբ Բանկի պարտավորությունները գերազանցում են ընդհանուր պարտավորությունների 5%ը) նկատմամբ Բանկի պարտավորությունները գերազանցում են Բանկի ընդհանուր ակտիվների (միջին ամսական) 20%ը ապա գերազանցող գումարի չափով միջոցները տեղաբաշխվում են առաջնակարգ բանկերում որպես կարճաժամկետ (314 օր) ավանդներ կամ ձեռք է բերվում բարձր իրացվելի արժեթղթեր:

Ներքին վերահսկողության նպատակով սահմանվում են հետևյալ նորմատիվները՝

	Անվանումը	Սահմանաչափը
1	Ն <sub>1</sub> <sup>1</sup> (Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ)	ԿԲ նորմատիվ + 2%
2	Ն <sub>2</sub> <sup>1</sup> (ԲԻԱ/Ընդհանուր ակտիվներ)	ԿԲ նորմատիվ + 2%
3	Ն <sub>2</sub> <sup>2</sup> (ԲԻԱ/Ցպահանջ պարտավորություններ)	ԿԲ նորմատիվ + 5%
4	Ն <sub>3</sub> <sup>1</sup> Սեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	ԿԲ նորմատիվ 1%
5	Ն <sub>3</sub> <sup>2</sup> Բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	ԿԲ նորմատիվ 20%
6	Ն <sub>4</sub> <sup>1</sup> Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	ԿԲ նորմատիվ
7	Ն <sub>4</sub> <sup>2</sup> Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	ԿԲ նորմատիվ – 2%

Բանկի կողմից սահմանված ներքին հիմնական տնտեսական և այլ նորմատիվներից շեղումները թույլատրվում են միայն Բանկի խորհրդի կողմից:

**Ներդրումային պորտֆելի կենտրոնացումների սահմանաչափերը կարգավորվում են Բանկի «Ներդրումային Քաղաքականությամբ» և որոնք**

**ԵՈՒ**

1 Բանկի ներդրումային պորտֆելը չի կարող ընդգրկել միևնույն թողարկողի ցանկացած տիպի արժեթղթերի այնպիսի քանակ որը գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 4%ը: Նշված սահմանափակումը չի տարածվում ՀՀ պետական և Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի վրա:

2 Բանկի ներդրումային պորտֆելը չի կարող ընդգրկել ցանկացած տիպի արժեթղթերի այնպիսի ծավալ որը գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%ը: Նշված սահմանափակումը չի տարածվում ՀՀ պետական և Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի վրա:

3 Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելը առանց հաշվի առնելու ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը չի կարող գերազանցել Բանկի ընդհանուր ակտիվների 30%ը:

4 Բանկի ներդրումային պորտֆելը հաշվի առնելով ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը չի կարող գերազանցել Բանկի ընդհանուր ակտիվների 40%ը:

5 Մեկ երկրում կատարված ներդրումների չափը այդ թվում այդ երկրի բանկերում բացված թղթակցային հաշիվների մնացորդները և այդ բանկերում ներդրված միջբանկային ավանդները չպետք գերազանցեն ընդհանուր կապիտալի 20% (հաշվի առնելով համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգ 2ի տվյալ երկրի կշիռը):

Սույն սահմանաչափերի հաշվարկը կատարվում է օրական կտրվածքով: Նշված կենտրոնացումների սահմանաչափերից շեղումները կարող են թույլատրվել միայն Բանկի Խարհրդի կողմից՝ Խորհրդի համապատասխան որոշմամբ:

Բանկի ներդրումային պորտֆելի ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով տնտեսության ճյուղային և թողարկողների բազմազանացման սկզբունքներից:

1. Բազմազանացման միջոցով կատարվում է ներդրումների շուկայական ռիսկի միջինացում և կոնկրետ ներդրմանը ներհատուկ ռիսկի նվազեցում:
2. Ներդրումներին ներհատուկ ռիսկի նվազեցման աստիճանը կախված է ներպորտֆելային կորելացիայի գործակցից: Որքան փոքր է ներպորտֆելային կորելացիայի գործակցիցը այնքան մեծ է բազմազանացման աստիճանը:
3. Բանկի կողմից ներդրումային պորտֆելը պետք է ընտրվի այնպես որ հնարավորին չափով նվազեցվի ներպորտֆելային կորելացիայի գործակցիցը:

Իրացվելիության ռիսկը բանկում գնահատվում է օգտագործելով տարբեր մոդելներ և մեթոդիկաներ ինչպիսիք են GAPի ՔԱՄԵԼՍ ՀՀ կենտրոնական բանկի կողմից առաջարկվող մեթոդները և նորմատիվները:

Իրացվելիության ռիսկի գնահատումը կատարվում է ստորև ներկայացված մեթոդիկայով:

Բանկի իրացվելիության կառավարման տեսանկյունից իրացվելիության ռիսկի գնահատումը կատարվում է՝ բացահայտելով բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքը: Գնահատման հաշվարկը իրականացվում է ելնելով ակտիվների և պարտավորությունների մարմանը մնացած ժամկետներից: Հաշվարկների մեջ ընդգրկվում են միայն մինչև մեկ տարի մարմանը մնացած ակտիվները և պարտավորությունները:

Իրացվելիության գնահատման տվյալ մեթոդաբանությունը կատարվում է ակնթարթային մինչև 90 օր կուտակային և ընդհանուր իրացվելիությունների տարանջատումով:

**1 Ակնթարթային իրացվելիություն**

$$ԱԻ = \frac{ԱԳԱ + \text{ՊԳԱ}}{ԲԻԱ}$$

որտեղ

ԱԻ բանկի ակնթարթային իրացվելիությունն է

ԲԻԱ բարձր իրացվելի ակտիվներն են

ԱԳԱ – ցպահանջ ակտիվներն են

ՊԳԱ – ցպահանջ պարտավորություններն են:

**2 Մինչև 90 օր կուտակային իրացվելիությունը** բանկի մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվների (ներառած ԲԻԱ) և մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ պարտավորությունների տարբերության (մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ կուտակային ճեղքվածքի) հարաբերակցությունն է բարձր իրացվելի ակտիվներին

<b>ԿԻ<sub>մինչև 90 օր</sub> =</b>	<b>Ա<sub>մինչև 90 օր</sub> + Պ<sub>մինչև 90 օր</sub></b>
	<b>ԲԻԱ</b>

որտեղ

**ԿԻ<sub>մինչև 90 օր</sub>** բանկի մինչև 90 օր մարման կուտակային իրացվելիությունն է

**ԲԻԱ** բարձր իրացվելի ակտիվներն են

**Ա<sub>մինչև 90 օր</sub>** – մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվներն են

**Պ**<sub>մինչև 90 օր</sub> – մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ պարտավորություններն են:

3 **Ընդհանուր իրացվելիությունը** բանկի մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ ակտիվների (ներառած ԲԻԱ) և մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտավորությունների տարբերության (մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ կուտակային ճեղքվածքի) հարաբերակցությունն է բարձր իրացվելի ակտիվներին

<b>ԸԻ =</b>	<b>ԸԱԸՊ</b>
	<b>ԲԻԱ</b>

որտեղ

**ԸԻ** բանկի մինչև մեկ տարի կուտակային իրացվելիությունն է

**ԲԻԱ** բարձր իրացվելի ակտիվներն են

**ԸԱ** – մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ ակտիվներն են

**ԸՊ** – մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտավորություններն են:

4 Ակնթարթային իրացվելիության (ԱԻ) բանկի մինչև 90 օր մարման կուտակային իրացվելիության (**ԿԻ**<sub>մինչև 90 օր</sub>) և բանկի մինչև մեկ տարի կուտակային իրացվելիության (ԸԻ) հաշվարկված մեծությունների ներքոհիշյալ սահմանաչափերի հիման վրա տրվում են գնահատականներ

բացասական մեծությունից մինչև 0%	<b>C</b>	անբավարար
0%ից (ներառած) մինչև 50 %	<b>B</b>	բավարար
50%ից (ներառած) բարձր մեծությունը	<b>A</b>	լավ

Այս մեթոդաբանությամբ բանկի իրացվելիության գնահատակը 30/09/10թ AAA:

Բանկը իրականացնում է նաև իրացվելիության գնահատումը ըստ ՔԱՄԵԼՍի որը 30/09/10թ դրությամբ կազմել է մոտ 5 միավոր:

Իրացվելիության պահպանման նպատակով բանկում օգտագործվում են հետևյալ մեթոդները

**1.Ակտիվների կառավարման ընթացքում**

**ա) Սցենարների մոդելավորում**

Ակտիվների կառավարման ընթացքում կարևորագույն դեր է խաղում սցենարների մշակումը ինչից կախված են ակտիվների օպտիմալ կառուցվածքի ընտրության արդյունքները: Սցենարները չեն դիտարկվում որպես ապագայի լավագույն կանխատեսում սակայն ընտրված

սցենարների բազմազանությունը պետք է օբյեկտիվորեն արտացոլի տնտեսական իրավիճակը և հնարավոր հանգամանքները որոնք կարող են ազդել պորտֆելի դինամիկայի ապագա փոփոխությունների վրա: Սցենարները մշակվում են տվյալների պատմական շարքերի հիման վրա:

**բ) Իրացվելի ակտիվների վաճառքի մեթոդ**

Մեթոդի էությունը կայանում է նրանում որ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Բանկը դրամական միջոցներ ստանալու նպատակով իրացնում է իր ակտիվները: Բանկն այս մեթոդը կիրառում է այն դեպքում երբ առկա են երկրորդային պահուստներ արժեթղթերի տեսքով որոնք կարելի է արագ և շահավետ վաճառել:

**գ) Կարճաժամկետ վարկերի տրամադրման մեթոդ**

Մեթոդի էությունը կայանում է նրանում որ Բանկը պահպանում է անհրաժեշտ իրացվելիության մակարդակը՝ իրականացնելով հաճախորդների կարճաժամկետ վարկավորում 36 ամիս ժամկետներով:

**2. Պարտավորությունների կառավարման ընթացքում** Բանկի հիմնական խնդիրներն է հաճախորդների ձևավորված բազայի դրամական հոսքերի վերլուծությունը և հեռանկարում նոր միջոցների ներգրավումը: Պասիվների օպտիմալ կառուցվածքի ձևավորման համար Բանկը պետք է ղեկավարվի հետևյալ սկզբունքներով

Ս օգտագործել այն աղբյուրները որոնք կնվազեցնեն միջոցների ներգրավման ծախսերը ինչը թույլ կտա հասնել շահույթի և սեփական կապիտալի ավելացմանը:

Ս ընտրել օպտիմալ համամասնություններ ավանդների փոխառու միջոցների և կապիտալի միջև ինչը թույլ կտա ապահովել միջոցների աղբյուրների կայունության ցանկալի մակարդակ և համապատասխանաբար առավել երկար ժամկետով և առավել մեծ եկամտաբերությամբ ներդրումներ:

Այսպիսով պասիվների անհրաժեշտ օպտիմալ կառուցվածքի ձևավորման գործընթացում Բանկի համար ամենակարևորը պասիվի գինն է: Հիմնական գործիքները որոնց միջոցով Բանկը հասնում է դրան համարվում են ավանդների տոկոսադրույքները ինչպես նաև երկարաժամկետ փոխառու միջոցների ներգրավման հնարավորությունը:

Վարկերի նկատմամբ պահանջարկի մեծացման դեպքում Բանկը համեմատած մրցակից բանկերի հետ պետք է բարձրացնի ավանդների և դրամական շուկայի այլ փոխառու միջոցների գծով տոկոսադրույքները: Ազատ միջոցների ավելցուկի առկայության և դրանց օգտագործման համար հնարավոր շահութաբեր ներդրումների բացակայության դեպքում Բանկն իջեցնում է իր տոկոսադրույքները և միջբանկային շուկայում առաջարկում է ռեսուրսներ առավել ցածր գնով:

Այսպիսով ակտիվների և պարտավորությունների կառավարման ռազմավարության մեջ կարևորը տոկոսային մարժայի կառավարումն է որն իրականացվում է ձևավորված GAPի և սպրեդի որոշման և կառավարման միջոցով:

3. **Ակտիվապասիվային կառավարման ընթացքում** իրացվելիության պահպանման նպատակով բանկային պրակտիկայում օգտագործվում են հետևյալ մեթոդները

**ա) Միջոցների ընդհանուր ֆոնդի մեթոդ**

Միջոցների ընդհանուր ֆոնդի մեթոդի էությունը կայանում է նրանում որ ակտիվների կառավարման գործընթացում ռեսուրսների բոլոր տեսակները՝ ցպահանջ հաշիվների մնացորդները ժամկետային ավանդները կանոնադրական կապիտալը և պահուստները միավորվում են որպես Բանկի ռեսուրսների միասնական ֆոնդ: Այնուհետև միասնական ֆոնդի միջոցները բաշխվում են ակտիվների այն տեսակների միջև որոնք Բանկի կարծիքով հանդիսանում են առավել ընդունելի իրենց շահութաբերության և իրացվելիության տեսանկյունից: Այնուհետև որոշվում են այն միջոցները որոնք կարող են տեղաբաշխվել երկրորդային պահուստում որի մեծությունը կախված է Բանկի պարտավորությունների ծավալների և վարկերի պահանջարկի տատանումներից: Միջոցների տեղաբաշխման երրորդ փուլում ձևավորվում է վարկային պորտֆելը:

**բ) Ակտիվների տեղաբաշխման մեթոդ**

Այս մեթոդի կիրառման ժամանակ հաշվի է առնվում իրացվելի ակտիվների կախվածությունը Բանկի կողմից ներգրավված միջոցների աղբյուրներից և սահմանվում է որպես որոշակի հարաբերություն ակտիվների և պասիվների համապատասխան տեսակների միջև:

Այս դեպքում հաշվի է առնվում որ յուրաքանչյուր աղբյուր պահանջում է տարբեր ապահովվածություն և համապատասխանաբար պարտադիր պահուստների ցուցանիշներ: Մասնավորապես ցպահանջ ավանդների համար անհրաժեշտ է սահմանել պարտադիր պահուստների ավելի բարձր ցուցանիշ քան ժամկետային ավանդների համար այսինքն՝ որպես ցպահանջ ավանդ ընդունված միջոցների մեծ մասը պետք է տեղաբաշխվի առաջնային և երկրորդային պահուստներում ինչը հնարավորություն կտա Բանկին կատարելու իր պարտավորությունները ավանդատուների նկատմամբ:

Համաձայն այս մեթոդի՝ որոշվում են իրացվելիության (եկամտաբերության) մի քանի կենտրոններ: Մասնավորապես այդպիսի կենտրոններ են հանդիսանում ցպահանջ հաշիվները Բանկի ժամկետային պարտավորությունները (ժամկետային ավանդներ) կանոնադրական կապիտալը և պահուստները: Յուրաքանչյուր այդպիսի կենտրոնից միջոցները կարող են տեղաբաշխվել միայն որոշակի տեսակի ակտիվներում՝ ելնելով նրանից որ ապահովվի դրանց համապատասխան իրացվելիությունը և շահութաբերությունը:



**Ծանոթագրություն 33. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»**

	ՀՀ ԿՔ սահմանած նորմատիվի մեծություն	31/12/09	30/09/10
Կապիտալ ընդհանուր (միջին)	2 400.0	9 222.1	9 996.8
Կանոնադրական հիմնադրամ		7 200.0	7200
<b>Կապիտալի համարժեքության նորմատիվներ</b>			
<b>Ն1</b>	<b>12.0%</b>	61.7%	45.6%
<b>Իրացվելիության նորմատիվներ</b>			
<b>ընդհանուր Ն<sup>1</sup></b>	<b>15.0%</b>	37.5%	27.1%
<b>ընթացիկ Ն<sup>2</sup></b>	<b>60.0%</b>	170.1%	200.8%

«Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

Ստորև ներկայացվում են ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների հաշվարկման համար կիրառվող հիմնական և ընդհանուր կապիտալները, կապիտալի համարժեքության նորմատիվի ցուցանիշները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ ըստ ամիսների, համեմատելով այդ ցուցանիշները նորմատիվային պահանջների հետ:

**Բանկի նորմատիվային կապիտալը**

- հունվար ամսվա համար կազմում է 9.609.153 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 64.86 % ,
- փետրվար ամսվա համար կազմում է 9.602.176 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 62.71 % ,
- մարտ ամսվա համար կազմում է 9.548.600 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 52.82 % ,
- ապրիլ ամսվա համար կազմում է 9.564.328 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 52.39 % ,
- մայիս ամսվա համար կազմում է 9.589.704 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 47.78 % ,
- հունիս ամսվա համար կազմում է 9.660.213 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 48.79 % ,:
- հուլիս ամսվա համար կազմում է 9.784.182 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 48.81 % ,:
- օգոստոս ամսվա համար կազմում է 9.876.393 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 48.09 % ,:
- սեպտեմբեր ամսվա համար կազմում է 9.996.795 հազ. դրամ, Ն 1 նորմատիվը 45.58 % ,:

Ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, անավարտ ժամկետային գործառնությունների ռիսկերի կշիռները՝ ըստ Բազելի ռիսկի կշիռների դասերի.

- վարկային ռիսկ 20.440.309 հազ. դրամ,
- շուկայական ռիսկ 57.484 հազ. դրամ,
- գործառնական . ռիսկ 121.324 հազ. դրամ :

Աշխարհագրական կենտրոնացումներ

Բանկի ֆինանսական ակտիվների աշխարհագրական կենտրոնացումների վերլուծությունը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Հաշվետու ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ* երկրներ	Ոչ ՏՀԶ Կ երկր ներ	Ընդամենը
-------------------	----	----------------	------------------	-------------------------------	----------

Ակտիվներ					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	4.638.330	-	-	-	4.638.330
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	854.759	277.571	1.184.878	-	<b>2.317.208</b>
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	15.703.034	600	-	-	15.703.634
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	1.162.494	-	-	-	1.162.494
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	1.869.522				1.869.522
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>24.228.139</b>	<b>278.171</b>	<b>1.184.878</b>		<b>25.691.188</b>

Նախորդ ժամանակաշրջան

Հողվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀ ԶԿ եր կր նե ր	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	3.777.242	-	-	-	<b>3.777.242</b>
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	142.106	193.291	3.275.207	-	<b>3.610.604</b>
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	2.946	-	-	<b>2.946</b>
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	8.661.890	2.891	-	-	8.664.781
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	309.129	-	-	-	309.129
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	539.798	-	-	-	539.798
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>13.430.165</b>	<b>199.128</b>	<b>3.275.207</b>	<b>-</b>	<b>16.904.500</b>

ՏՀԶԿ\* Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն :

### **«Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»**

Բանկը հեջավորում չի իրականացնում:

### **«Գրավադրված ակտիվներ»**

Բանկը գրավադրված ակտիվներ չունի:

### **«Ընդունված գրավ»**

Բանկը՝ որպես գրավ ընդունված ակտիվները, իրավունք ունի վաճառել կամ նորից գրավադրել հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման, խախտման դեպքում: Գրավով ապահովված ակտիվները հետևյալն են՝

- այլ արժեթղթեր - 723,851
- թանկարժեք զարդեր և մետաղներ - 322.184
- անշարժ գույք – 38.638.867
- պատրաստի արտադրանք - 326,000
- այլ գրավ - 229.897

- դրամական միջոցներ – 607.681

**Բանկի կողմից պարտավորությունների չկատարում կամ խախտում չկա:**